

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՇՈՏ ԼԵԿԴԱՐԻ**

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՀԱՅ ԷԹՆՈՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ**

**ԺԳ. 00. 01 «Մանկավարժության տեսություն և պատմություն»  
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ 2020**

**Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:**

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների  
թեկնածու, դոցենտ Գ.Հ. Հակոբյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների  
դոկտոր, դոցենտ Ժ.Պայլոզյան  
մանկավարժական գիտությունների  
թեկնածու, դոցենտ Վ.Վ. Գրիգորյան

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հովի. Թումանյանի անվան  
պետական համալսարան


Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020 թ. փետրվարի 27-ին ժամը 12:00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010 ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020թ. հունվարի 17- ին:

«Մանկավարժություն» 020 մասնագիտական  
խորհրդի գիտական քարտուղար՝

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ  Թ. Յու. Ազատյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հետազոտության արդիականությունը:** Հայ էթնոհանրությունն ունի պատմականորեն ձևավորված իր առանձնահատկությունները: Դարասկզբին ենթարկվելով ցեղասպանության՝ հայության մեծ մասն այսօր ապրում է պատմականորեն ձևավորված իր կենսատարածքից՝ Հայրենիքից դուրս, նրա հատվածները չունեն ընդհանուր տարածքային, ֆինանսատնտեսական և լեզվական ամբողջություն: Տուրք տալով իր կենսասոցիալական ժառանգական կանչին՝ համայն հայությունը, բնականաբար, փորձում է համախմբել Հայկական լեռնաշխարհի մի հատվածում ստեղծած իր պետական կազմավորման՝ Հայաստանի Հանրապետության շուրջ: Այդ գործընթացն ունի իր դժվարությունները: Աշխարհասփյուռ հայ համայնքները գտնվում են տարբեր պետական մշակույթ ունեցող երկրներում, կրոնական և լեզվախոսակցական փոքրամասնություն են կազմում այլ էթնոկրոնական միջավայրերում: Բնականաբար, որպես էթնոկիրներ՝ նրանք ենթակա են իրենց ազգային բնույթին ոչ միայն խորթ, այլև հաճախ անառողջ կողմնորոշում ունեցող խմբերի հնարավոր վարքաբարոյական ազդեցություններին: Դա ուժացման վտանգ է պարունակում հայ էթնոսի, նրա հետագա պահպանման և զարգացման համար: Հայ էթնոհանրության գոյության առանցքը բնահամապատասխանորեն ծնված և հարազատ մշակութային արժեհամակարգի շնորհիվ պահպանվող մենամուսնական ընտանիքն է:

Ընտանիքի՝ որպես կենսասոցիալական կառույցի քայքայումը վտանգում է աճող սերնդի սոցիալականացման բնականոն գործընթացը: Բնահամարության սկզբունքին համընթաց ձևավորված ներընտանեկան ավանդական փոխհարաբերությունների մշակույթի խախտման հետևանքով ի հայտ են գալիս ընտանեկան միջավայրում ծնված բռնության բազմաթիվ դեպքեր, վատթարանում է քրեածին իրավիճակը: Ամուսնալուծություններին հետևում են մանկածնության անկումն ու հասարակության ծերացումը: Երիտասարդ սերնդի քանակական աճի նվազումը հանգեցնում է ազգային տնտեսության թուլացման, իսկ պետությունը զրկվում է պաշտպանական կառույցների համակարգը երիտասարդ մասնագետների հերթափոխով բնականոն համալրումից: Խախտվում է ներընտանեկան փոխհարաբերությունների մշակույթը: ՀՀ ոստիկանության կողմից արձանագրվում են ընտանիքի անդամի նկատմամբ բռնության դեպքեր: Այդ ամենի արդյունքում խաթարվում է ՀՀ ազգային անվտանգությունը:

Պայմանավորված Հայաստանի Հանրապետության կազմավորման պատմական իրողություններով, տարածաշրջանում, աշխարհում ընթացող մարտահրավերներով և հայ էթնիկ հանրության կենսագործունեության առանձնահատկություններով՝ մանկավարժական գիտության համար ի հայտ են գալիս նոր խնդիրներ: Այս համատեքստում այսօր առանձնակի կարևորություն է ստանում անձի դաստիարակության գործընթացի համակողմանի ուսումնասիրումը և նրանում ընտանիքի ունեցած դերի բացահայտումը: Պատմամշակութային տարբեր ժամանակաշրջաններում ընտանեկան դաստիարակության

համակարգը լուրջ փոփոխություններ է կրել ինչպես հոգևոր-մշակութային, այնպես էլ արժեքային տեղաշարժերի հորձանուտում: Այդ ամենով պայմանավորված՝ ներկայումս առաջնահերթություն են հայ հանրության հազարամյա էթնոմանկավարժական մշակույթում կուտակված դաստիարակչական փորձի, գաղափարների ուսումնասիրումն ու վերլուծությունը, ընտանեկան դաստիարակության գործընթացում դրանց կիրառումը, ինչպես նաև ընտանեկան դաստիարակության վերաբերյալ հանրակրթական ծրագրի ներդնումը՝ հիմնված էթնոմշակութային առանձնահատկությունների վրա:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է տնտեսության համաշխարհայինացման գործընթացների, փոխակերպվող հասարակության, մարդկային տեղաշարժերի և միջմշակութային երկխոսության ներկա պայմաններում հայ էթնոմանկավարժական մշակույթում ընտանեկան դաստիարակության՝ հազարամյակների ընթացքում կուտակված կենսունակ փորձի, կիրառված միջոցների արժևորման, արդիականության տեսանկյունից իմաստավորման և մանկավարժական արդի պրակտիկայում կիրառման անհրաժեշտությամբ:

Հիմնախնդրի վերաբերյալ պատմական, փիլիսոփայական, մարդաբանական, ազգագրական, սոցիոլոգիական, մշակութաբանական, հոգեբանական, հրապարակախոսական, մանկավարժական գիտական գրականության, բանահյուսության, ազգային ավանդույթների ու սովորույթների վերլուծությունը թույլ տվեց վեր հանելու ընտանեկան դաստիարակության վերաբերյալ առկա տարբեր տեսանկյունների մշակվածության աստիճանը:

Համաշխարհային մանկավարժական մշակույթում ընտանեկան, հասարակական և քաղաքացիական դաստիարակության գործընթացների փոխկապակցվածության հարցերին անտիկ շրջանի մտավորականներից անդրադարձել են Կոնֆուցիուսը, Հերոդոտոսը, Պլատոնը, Արիստոտելը, Ցիցերոնը: Մանկավարժական գիտության ականավոր ներկայացուցիչներ Յ.Ա. Կոմենսկին, Յ. Հ. Պեստալոցին, Ա. Դիստերվեգը, Կ. Դ. Ուշինսկին կարևորել են դաստիարակության ժողովրդայնության գաղափարը, հիմնավորել են բնահամարության և մշակութաբանության սկզբունքները:

«Էթնոմանկավարժություն» եզրույթը ձևակերպել է Գ. Վոլկովը՝ մեծ նպաստ բերելով էթնոմանկավարժության՝ որպես մանկավարժության ինքնուրույն գիտաճյուղի հայեցակարգի ձևավորման գործում: Ռուս, յակուտ, չուվաշ և այլ էթնոհանրությունների էթնոմանկավարժական խնդիրներին, ընտանեկան դաստիարակության և տարիքային տարբեր կենսափուլերում դրանց իրականացման առանձնահատկություններին անդրադարձել են Գ. Վ. Նեգոբեմկովսկայան, Մ. Լ. Միխայլովան, Վ. Ա. Վականը, Է. Ի. Սոկոլնիկովան, Գ. Հ. Վալեևան և այլք:

Հայկական ուսուցանող քաղաքակրթության մանկավարժական մշակույթի զարգացման գործընթացում առանձնակի դեր են ունեցել Մ. Մաշտոցի, Մ. Խորենացու, Գր. Նարեկացու, Առ. Սյունեցու, Խ. Աբովյանի, Ղ. Աղայանի, Մ. Նալբանդյանի, Ա. Բահաթրյանի, Րաֆֆու՝ ընտանեկան դաստիարակության վերաբերյալ փորձն ու տեսագործնական մոտե-

ցումները: Հայ էթնոերաժշտական դաստիարակության գործում առանցքային է Կոմիտաս վարդապետի մշակութային ժառանգությունը:

ընտանեկան դաստիարակության ժամանակակից խնդիրները դիտարկվել են Լ. Թ. Ասատրյանի, Լ. Վ. Թորգոմյանի, Ա. Օ. Թովուզյանի, Ա.Ա. Նալչաջյանի, Ս. Շ. Մկրտչյանի, Գ. Հ. Հակոբյանի, Վ. Վ. Գրիգորյանի, Ա. Ա. Աշիկյանի և այլ հետազոտողների կողմից:

**Հետազոտության նպատակն է** բացահայտել հայ էթնոմանկավարժական մշակույթում ընտանեկան դաստիարակության միջոցները, տեսականորեն և գործնականում հիմնավորել մանկավարժական գործընթացում դրանց կիրառման նպատակահարմարությունը:

**Հետազոտության օբյեկտը** ընտանեկան դաստիարակության հիմնահարցն է հայ էթնոմանկավարժական մշակույթում:

**Հետազոտության առարկան** հայ էթնոմանկավարժության համատեքստում ընտանեկան դաստիարակության միջոցներն են:

**Հետազոտության վարկածն** այն է, որ աճող սերնդի՝ հայ էթնոմանկավարժական գաղափարներին, փորձին ու ավանդույթներին համահունչ ընտանեկան դաստիարակությունն առավել լիարժեք և արդյունավետ կիրականանա, եթե՝

1. էթնոմանկավարժության համատեքստում ուսումնասիրվեն և համակարգված ներկայացվեն աճող սերնդի ընտանեկան դաստիարակության ու միջսերնդային փոխհարաբերությունների վերաբերյալ պատմամշակութային տարբեր ժամանակաշրջաններում հայ և արտերկրի մշակույթի գործիչների հայացքները:

2. Ուսումնասիրվեն և վեր հանվեն հայ էթնոմանկավարժական մշակույթում ընտանեկան դաստիարակության փորձը, գաղափարները, միջոցները, վերլուծվի և հիմնավորվի ներկայումս ընտանեկան դաստիարակության գործընթացում դրանց կիրառման նպատակահարմարությունը:

3. Բնութագրվեն և մեկնաբանվեն ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները ժամանակակից աշխարհում, հիմնավորվեն էթնոմանկավարժության մեջ ընտանեկան դաստիարակության կենսունակ փորձի կիրառման հնարավորություններն աճող սերնդի ընտանեկան արժեհամակարգի ձևավորման գործում:

4. Սոցիոլոգիական հարցումների միջոցով ուսումնասիրվեն ընտանեկան դաստիարակության, ընտանեկան արժեքների, ընտանեկան բռնությունների վերաբերյալ սովորողների (աշակերտ, ուսանող) և մանկավարժների պատկերացումներն ու գիտելիքները, հիմնավորվի ընտանեկան դաստիարակության բաղադրիչի կարևորությունը կրթության բովանդակության մեջ և մանկավարժական արդի պրակտիկայում:

### **Հետազոտության խնդիրները.**

1. Ուսումնասիրել պատմամշակութային տարբեր ժամանակաշրջաններում ընտանիքի՝ որպես կենսասոցիալական կառույցի զարգացումն ու ձևավորումը, վերլուծել էթնոմանկավարժական մշակույթում ընտանեկան դաստիարակության վերաբերյալ փիլիսոփայական,

սոցիոլոգիական, մշակութաբանական, արժեքաբանական, ազգագրական, մանկավարժական, հոգեբանական հայեցակարգային մոտեցումները:

2. Էթնոմանկավարժության համատեքստում բնութագրել հայ և արտերկրի մանկավարժական մտքի նշանավոր ներկայացուցիչների հայացքներն ընտանեկան դաստիարակության վերաբերյալ:

3. Վերլուծել հայ բանահյուսության ժանրերում (էպոս, ավանդավեպ, առասպել, հեքիաթ, առակ, առած-ասացվածք, օրհնանք, խրատ, երգում), հոգևոր գրականության մեջ, ազգային երգ ու պարում, ծիսական արարողություններում, էթնոկիրառական արվեստում արտացոլված ընտանեկան դաստիարակության գաղափարները:

4. Բնութագրել ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները ժամանակակից փոխակերպվող հասարակության մեջ, վերլուծել հայ էթնոմանկավարժական մշակույթում արտահայտված դաստիարակության փորձի դերն ու նշանակությունը ընտանեկան բռնությունների կանխարգելման գործում:

5. Կրթական հաստատություններում իրականացնել սոցիոլոգիական հարցումներ՝ ուսումնասիրելու համար ընտանեկան դաստիարակության, ընտանեկան արժեքների, ընտանեկան բռնությունների վերաբերյալ սովորողների (աշակերտ, ուսանող) և մանկավարժների պատկերացումներն ու գիտելիքները:

6. Մշակել «Ընտանեկան դաստիարակություն և արժեքաբանություն» փորձնական դասընթացի ծրագիր՝ հիմնված ազգային և համամարդկային էթնոմանկավարժական մշակութային ժառանգության վրա, հիմնավորել ծրագրի ներդնման անհրաժեշտությունը հանրակրթության համակարգում:

#### **Հետազոտության մեթոդաբանական հիմքը.**

- Հայ և համաշխարհային էթնոմանկավարժության մեջ ընտանեկան արժեքների, դաստիարակության միջոցների, գործոնների վերաբերյալ հայեցակարգերը, դրույթները (- Կոնֆուցիուս, Հերոդոտոս, Ս. Ստուրլուսոն, Յ.Ա. Կոմենսկի, Յ.Հ. Պեստալոցցի, Ա. Դիստերվեգ, Կ.Դ. Ուշինսկի, Գ. Վոլկով, Մ. Խորենացի, Գր. Նարեկացի, Խ. Աբովյան, Մ. Նալբանդյան, Ղ. Աղայան, Րաֆֆի, Կոմիտաս վարդապետ և այլք),
- ընտանեկան դաստիարակության վերաբերյալ հոգևոր գրականության մեջ արձարծված գաղափարները (աստվածաշնչյան սուրբգրային տեքստեր),
- ընտանեկան դաստիարակության գործում հոգևոր (էպոս, ավանդավեպ, հեքիաթ, առակ, առած-ասացվածք, երգ, պար, ծես, ազգային ավանդույթներ) և նյութական մշակույթի (կառույցներ, կիրառական արվեստ, կենցաղային իրեր) վերաբերյալ վերլուծություններն ու գաղափարները, ընտանիքի զարգացման, ձևավորման, դաստիարակչական գործառույթների վերաբերյալ մարդաբանական (Մ. Միդ), էթնոհոգեբանական (Ա. Նալչաջյան, Տ. Գ. Ստեֆանենկո), էթնոմանկավարժական (Ա. Նալչաջյան, Ս. Մկրտչյան, Մ. Մանուկյան, Գ. Հակոբյան, Ա. Աշիկյան) գաղափարներն ու տեսությունները:

## **Հետազոտության տեսական և էմպիրիկ մեթոդները՝**

- հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, էթնոմանկավարժական, մշակութաբանական գրականության, բանահյուսական և ազգագրական նյութերի ուսումնասիրություն, համեմատական վերլուծություն, ընդհանրացում,
- զրույց, անկետավորում,
- սոցիալական տվյալների քանակական և որակական վերլուծություն:

## **Հետազոտությունն իրականացվել է երեք փուլով.**

- **Առաջին փուլում (2016-2017 թ.թ.)** ուսումնասիրվել և վերլուծվել են հետազոտության թեմային առնչվող գիտատեսական գրականությունը, ազգագրական և բանահյուսական նյութերը, որոշակիացվել են հետազոտության ուղղությունները:
- **Երկրորդ փուլում (2017-2018 թ.թ.)** ընտրվել է հետազոտության բազան, անցկացվել են սոցիալական տվյալների, վերլուծվել են ստացված տվյալները:
- **Երրորդ փուլում (2018-2019 թ.թ.)** մշակվել է «Ընտանեկան դաստիարակություն և արժեքանություն» փորձնական դասընթացի ծրագիրը, իրականացվել է փորձաքննությունը, համակարգվել, ընդհանրացվել են արդյունքները, շարադրվել է ատենախոսությունը, արվել են եզրակացություններ:

## **Հետազոտության գիտական նորույթը.**

1. Հայ և համաշխարհային էթնոմանկավարժական մշակույթում ընտանեկան դաստիարակության փորձի, գաղափարների համեմատական վերլուծության հիման վրա նորովի են մեկնաբանվել ընտանեկան դաստիարակության հիմնահարցը և ժամանակակից փոխակերպվող հասարակության մեջ այդ գործընթացի արդյունավետ իրականացման առաջնահերթությունները:

2. Բացահայտվել և բնութագրվել են պատմամշակութային տարբեր ժամանակաշրջանների նշանավոր մանկավարժ մտածողների հայացքներն ընտանեկան դաստիարակության մեջ էթնոմանկավարժության փորձի ու գաղափարների կիրառման, աճող սերնդի էթնոգիտակցության ձևավորման վերաբերյալ:

3. Հայ էթնոմանկավարժական մշակույթի համատեքստում համակարգված ներկայացվել են ընտանեկան դաստիարակության միջոցները՝ բանահյուսության ժանրերը, ազգային երգ ու պարը, ավանդույթներն ու ծիսական արարողությունները, էթնոկիրառական արվեստը, անվանաբանությունն ու տեղանվանաբանությունը, հիմնավորվել են արդիականության տեսանկյունից դրանց իմաստավորման անհրաժեշտությունն ու դաստիարակության գործընթացում կիրառման նպատակահարմարությունը:

4. Տեսական հետազոտության և սոցիալական տվյալների վերլուծության արդյունքում հիմնավորվել է էթնոմանկավարժական մշակույթի համատեքստում ընտանեկան դաստիարակության փորձի ու գաղափարների գիտական ուսումնասիրման հարցը, մշակվել է «Ընտանեկան դաստիարակություն և արժեքանություն» փորձնական դասընթացի ծրագիր՝ նախատեսված ավագ դպրոցի ընդհանուր հոսքի հենքային ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի շրջանակներում ուսումնասիրման համար:

### **Հետազոտության տեսական նշանակությունը.**

1. Վերլուծվել և տեսականորեն հիմնավորվել են «ընտանիք» կենսասոցիալական կառույցի տեսակները, գործառույթները, պետաիրավական երաշխիքները, էթնոմանկավարժության համատեքստում ընտանիքի զարգացման, ձևավորման իրավաբարոյական կարգավորիչները:
2. Համակարգվել են էթնոմանկավարժության մեջ ընտանեկան դաստիարակության վերաբերյալ հայ և համաշխարհային նշանավոր մանկավարժ մտածողների արտահայտած հայացքներն ու գաղափարները:
3. Տեսականորեն հիմնավորվել է էթնոմանկավարժական գործոնների և միջոցների (կենսատարածք, բնություն, աշխատանք, լեզու, կրոն, բանահյուսություն, կիրառական արվեստ, սոցիալ-տնտեսական համակարգ և այլն) ընտանեկան դաստիարակչական ներուժը:
4. Բացահայտվել և տեսականորեն հիմնավորվել է էթնոմանկավարժության միջոցների կենսունակությունն ընտանեկան դաստիարակության, անձի ինքնապաշտպանության, ընտանեկան բռնությունների կանխարգելման, էթնոհանրության, պետության և համամոլորակային հասարակության կենսասոցիալական արդի հիմնախնդիրների լուծման գործում:

### **Հետազոտության գործնական նշանակությունը.**

1. Տեսական և գործնական հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել ընտանիքի և ընտանեկան դաստիարակության հիմնախնդրով զբաղվող տարբեր մասնագետների՝ մանկավարժների, հոգեբանների, սոցիոլոգների, մշակութաբանների, ազգագրագետների, պատմաբանների, իրավագետների համար:
2. Մշակված նյութերը կարող են գործնականում կիրառվել ուսուցիչների վերապատրաստման, դասղեկի ժամերի թեմատիկ պլանավորման, կրթության բովանդակության մեջ (առարկայական չափորոշիչներ, ծրագրեր, դասագրքեր, ձեռնարկներ) ընտանեկան դաստիարակության բաղադրիչի մշակման գործընթացներում:

### **Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.**

1. Ընտանեկան առողջ կենսամիջավայր ունեցող ընտանիքն ամուր պետության հիմքն է, ընտանեկան դաստիարակությունը համապետական դաստիարակչական համակարգի բաղկացուցիչ է: Այս առումով մանկավարժական գիտությունը ձեռք է բերում ոչ միայն սոցիալ-մշակութային, այլև ռազմավարական նշանակություն:
2. Հայ էթնոմանկավարժական մշակույթում խտացած և հազարամյակների փորձով ստուգված ընտանեկան դաստիարակության կենսահաստատ փորձի, գաղափարների, միջոցների՝ արդիականության տեսանկյունից նորովի իմաստավորումն ու համակարգված փոխանցումը նպաստում են էթնիկական տվյալ հանրության կենսասոցիալական արժեհամակարգի ժառանգմանն ու աճող սերնդի ճիշտ դաստիարակությանը՝ որպես անձի, պետության և հասարակության համապարփակ ինքնապաշտպանական համակարգ:
3. Աճող սերնդի ընտանեկան դաստիարակության նպատակը ձևավորվում է որպես պատմահասարակական երևույթ և արտահայտվում է էթնոմանկավարժական մշակույթում՝ բանահյուսության մեջ, ավանդույթներում, ծեսերում, հոգևոր գրականության մեջ, ազգային



երգ ու պարում, էթնոկիրառական արվեստում, ժողովրդի ստեղծագործ հանճարի տարբեր դրսևորումներում:

4. Էթնոմանկավարժական մշակույթում կուտակված ընտանեկան դաստիարակության փորձի ու գաղափարների՝ պետական, հասարակական կառույցների կողմից գիտական մեթոդաբանությամբ ուսումնասիրումն ու կրթական համակարգում ներդնումը ընտանեկան տարաբնույթ բռնությունների կանխարգելման, միջմշակութային հաղորդակցման, էթնո-հանդուրժողականության զարգացման ներգործուն միջոց են:

5. Ավագ դպրոցի ընդհանուր հոսքի հենքային ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչում «Ընտանեկան դաստիարակություն և արժեքանություն» փորձնական դասընթացի ներմուծումը և կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերում ընտանեկան դաստիարակության բաղադրիչի շեշտադրումը՝ ընտանեկան դաստիարակության ժամանակակից պահանջներին բավարարող մեթոդաբանությամբ, համաշխարհայնացման արդի գործընթացներում մարտահրավերներին դիմակայման, ազգային անվտանգության ապահովման կայուն երաշխիք են:

**Հետազոտության արդյունքների արժանահավատությունն ու հիմնավորվածությունն** ապահովվում են հետազոտության մեթոդաբանական հիմքը կազմող գիտական հրատարակությունների, տեսությունների, էթնոմշակութային նյութերի համակողմանի վերլուծությամբ, հետազոտության տրամաբանությանը համարժեք մեթոդների կիրառմամբ, սոցիոլոգիական հարցումների արդյունքում ստացված տվյալների վերլուծությամբ, մեկնաբանմամբ, կատարված եզրահանգումներով:

**Հետազոտության արդյունքների փորձաքննությունն ու ներդնումը:** Հետազոտության արդյունքների փորձաքննությունն իրականացել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի մանկավարժության տեսության և պատմության ամբիոնի նիստերում: Հետազոտության արդյունքները ներդրվել են սոցհարցման բազա հանդիսացած ուսումնական հաստատություններում, մասնավորապես ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի Մ.Գորկու անվան թիվ 5 դպրոցի բարձր դասարաններում «Ընտանեկան դաստիարակություն և արժեքանություն» փորձնական դասընթացի առանձին թեմաների ուսումնասիրմամբ: Հետազոտության թեմայի վերաբերյալ զեկուցումներ են կարդացվել մեկ հանրապետական և մեկ միջազգային գիտաժողովներում: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հրապարակված գիտական 9 հոդվածներում:

**Հետազոտության բազան:** Հետազոտական աշխատանքները կազմակերպվել են ՀՀ-ի հետևյալ կրթական հաստատություններում՝ Արմավիրի մարզի Ակնաշեն գյուղի միջնակարգ դպրոց, Վաղարշապատ քաղաքի թիվ 4, 5, 6, 10 հանրակրթական դպրոցներ, Վաղարշապատ քաղաքի պետական քոլեջ, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի սկզբնական կրթության, պատմության և իրավագիտության ֆակուլտետների երրորդ և չորրորդ կուրսեր:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը կառուցված է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, 151 սկզբնաղբյուր պարունակող գրակա-

նության ցանկից, ներառում է 4 աղյուսակ, 15 տրամագիր, 4 հավելված: Ատենախոսության ծավալը կազմում է 177 համակարգչային էջ:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածության** մեջ հիմնավորվել է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը, առաջադիր վարկածը, խնդիրները, գիտական նորոյթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության բազան, արդյունքների փորձաքննությունն ու ներդրումը, ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին՝ **«Ընտանեկան դաստիարակությունը՝ սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր»** խորագրով գլուխը բաղկացած է չորս ենթագլխից: Առաջին՝ **«Ընտանիքը՝ որպես սոցիալական կառույց և դաստիարակչական միջավայր»** ենթագլխում ներկայացվել են ընտանիքի զարգացման ընթացքը, այդ գործընթացի արտացոլումները համաշխարհային բանահյուսական գործերում, ընտանիքի վերաբերյալ տարբեր տեսաբանների, հետազոտողների տեսակետները, ինչպես նաև հայ ընտանեկան կյանքի բարոյական պատկերացումների առարկայացումը պետաիրավական մշակույթում: Երկրորդ՝ **«Ընտանեկան դաստիարակության արտացոլումը էթնոմանկավարժական մշակույթում»** վերնագրով ենթագլխում ներկայացված են «էթնոս» հասկացությունն ըստ Յ. Բրոմլեյի, էթնոմանկավարժության սահմանումն ըստ Գ.Վոլկովի, մշակույթի վերաբերյալ Յիցերոնի տեսակետը: Վերլուծված են էթնոլնտանեկան դաստիարակությունը՝ որպես մշակույթի բաղադրիչ, այն պայմանավորող գործոններն ու վաղնջական պատմական շրջանում ի հայտ եկած միջոցները, քննության է առնված դաստիարակության գաղափարների զարգացումը՝ արտացոլված կրոնադիցաբանական մշակույթում: Երրորդ՝ **«Ընտանեկան դաստիարակության հարցի մեկնաբանումը արտերկրի մանկավարժ մտածողների հայացքներում»** խորագրով ենթագլխում էթնոմանկավարժության համատեքստում մեկնաբանվել են Կոնֆուցիուսի, Հերոդոտոսի, Ս.Ստուրյուսոնի, Յան Ա. Կոմենսկու, Յ. Հ. Պետտալոցցու, Ա. Դիստերվեգի, Կ.Դ. Ուշինսկու՝ ընտանեկան դաստիարակության վերաբերյալ գաղափարները, որոնք կազմում են համամարդկային մանկավարժական մշակույթի հիմնարար մասը: **«Էթնոմանկավարժության համատեքստում ընտանեկան դաստիարակության վերաբերյալ հայ դասական մանկավարժների տեսակետների վերլուծություն»** վերնագրով ենթագլխում վերլուծվել են հայ մշակույթի նշանավոր գործիչներ Մեսրոպ Մաշտոցի, Մովսես Խորենացու, Գր.Նարեկացու, պատմաշխարհագետ Ղուկաս վարդապետ Ինճիճյանի, Խ.Աբովյանի, Գ. Սրվանձոյանի, Ղ.Աղայանի, Ռաֆֆու, Կոմիտաս վարդապետի գործունեության մեջ և հայացքներում արձարժված էթնոլնտանեկան դաստիարակության գաղափարները: Արվել է այն եզրահանգումը, որ էթնոմանկավարժական տեսությունները ծնվել և զարգացել են ըստ էթնոհանրության մշակութային ժառան-

գության՝ որպես մարդու, ընտանիքի և հասարակության փրկությունն ապահովող ինքնապաշտպանության միջոցներ:

Ատենախոսության երկրորդ՝ **«Ընտանեկան դաստիարակության միջոցները հայ էթնոմանկավարժական մշակույթում»** խորագրով գլուխը կազմված է չորս ենթագլխից: Առաջին՝ **«Դաստիարակչական գաղափարների և ընտանեկան արժեքների խտացումը «Սասունցի Դավիթ» էպոսում»** վերնագրով ենթագլխում վերլուծվել են էպոսում արտացոլված միջսերնդային երկխոսության, ներընտանեկան փոխհարաբերությունների մշակույթի, նյութական և հոգևոր արժեքների ժառանգորդության, երեխայի դաստիարակության գաղափարները: Հիմնավորվել է, որ էպոսում խտացած մարդկային գլխավոր արժեքն ընտանիքն է, որում դաստիարակվում է համամարդկային արժեհամակարգ կրող մարդը: Պայմանավորված այն իրողությամբ, որ էպոսը խտացնում է ժողովրդի հավաքական փորձն ու աշխարհայացքը, էթնոմանկավարժության տեսանկյունից քննության են առնվել հայկական էպոսի կերպարները, որոնց նկարագրերի վերլուծությունը դաստիարակչական նշանակություն ունի սոցիալ-տնտեսական վերափոխումների և դրանց հետևանքով ներընտանեկան փոխհարաբերությունների ոլորտում տեղաշարժերի արդի պայմաններում: Երկրորդ՝ **«Ընտանեկան դաստիարակությունը բանահյուսության այլ ժանրերում»** խորագիրը կրող ենթագլխում ընտանեկան դաստիարակության տեսանկյունից վերլուծված են ժողովրդական հեքիաթները, ավանդավեպերը, առասպելները, առակները, առածները, օրհնանքները, երգումները, տեղանվանաբանությունն և անվանաբանությունը: Հիմնավորվել է, որ բանահյուսության այս ժանրերն այն ազդու միջոցներն են, որոնք դաստիարակում են մարդուն: Երրորդ՝ **«Երգի և պարի դերն ընտանեկան դաստիարակության գործընթացում»** վերնագրով ենթագլխում քննարկված են օրորոցային երգերը, հարսանեկան-ծիսական պարերը՝ որպես սիմվոլացման յուրահատուկ դրսևորում, որոնք դաստիարակչական մեծ ներուժ ունեն: Չորրորդ՝ **«Ընտանեկան արժեքների պահպանման ու փոխանցման դրսևորումները ծիսական արարողություններում, էթնոկիրառական արվեստում»** խորագրով ենթագլխում ներկայացված են ծիսական արարողությունները՝ հարսանիք, հուղարկավորություն, մկրտություն, ինչպես նաև նյութական մշակութային արժեքները՝ որպես էթնիկական ինքնաճանաչման և ընտանեկան դաստիարակության միջոցներ:

Երրորդ՝ **«Ընտանեկան դաստիարակության հիմնախնդիրը ժամանակակից աշխարհում»** խորագրով գլուխը բաղկացած է չորս ենթագլխից: Առաջին՝ **«Ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները փոխակերպվող հասարակության մեջ»** վերնագրով ենթագլխում ներկայացվել են ներկայումս համաաշխարհային տնտեսական գործընթացներով պայմանավորված փոխակերպվող հասարակությունում ընտանեկան դաստիարակության խնդիրները և դրանց լուծման հնարավոր ուղիները: Վերլուծվել է, որ արդի թվային իրականությունը, տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաները, տեղեկույթի անվերահսկելի հեղեղը,

Ժողովրդագրական տեղաշարժերը արմատապես փոխել են ընտանեկան կենսամիջավայրը և ներընտանեկան փոխհարաբերությունների բնույթը:


Երկրորդ՝ **«Հայ էթնոմանկավարժական մշակույթը՝ ընտանեկան բռնության կանխարգելման միջոց»** վերնագրով ենթագլխում մեկնաբանվել է ընտանեկան բռնությունների վերաբերյալ իրավիճակը:

Ըստ ՀՀ ոստիկանության ՀԿԼ վարչության՝ առ 28.11.2018 թ. տրամադրված թիվ 25/590 գրության՝ վերլուծվել է ՀՀ-ում գրանցված ընտանեկան բնույթի բռնությունների քանակը 2013-2018 թ.թ. նոյեմբերն ընկած ժամանակահատվածում:

Համեմատության մեջ դնելով ընտանեկան բռնության արտահայտությունը տարբեր ժողովուրդների բանահյուսական գործերում՝ արվել է այն հետևությունը, որ հայկական էպիկական ընտանեկան մշակույթին խորթ են բռնությունները, և մասնավորապես այդօրինակ ընտանեկան նկարագիրն օգտագործելով որպես դաստիարակչական օրինակ՝ կարելի է հասնել ընտանեկան կյանքում բռնարարքների կանխարգելմանը: Երրորդ՝ **«Ընտանեկան դաստիարակության և միջսերնդային փոխհարաբերությունների վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների վերլուծություն»** վերնագրով ենթագլխում ներկայացված են իրականացված սոցիոլոգիական հարցումների ուսումնասիրության արդյունքները: Սոցիոլոգիական հարցման նպատակն էր պարզել ընտանիքի և ընտանեկան դաստիարակության վերաբերյալ աճող սերնդի, մանկավարժների, ծնողների պատկերացումները: Երեք բնույթի հարցաթերթիկների միջոցով փորձ է արվել պարզելու սովորողների վերաբերմունքը էթնոընտանեկան մշակութային արժեքների, ընտանեկան բռնությունների վերաբերյալ, ինչպես նաև ուսումնասիրելու մանկավարժների և մանկավարժական համալսարանի ուսանողների կարծիքը կրթության համակարգում ընտանեկան դաստիարակության գործընթացի վերաբերյալ: Սոցհարցումներին մասնակցել են Արմավիրի մարզի Ակնաշեն գյուղի միջնակարգ դպրոցի, Վաղարշապատ քաղաքի թիվ 4, 5, 6, 10 հանրակրթական դպրոցների մանկավարժներն ու աշակերտները, Վաղարշապատ քաղաքի պետական քոլեջի, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի սկզբնական կրթության, պատմության և իրավագիտության ֆակուլտետների երրորդ և չորրորդ կուրսերի ուսանողները:

Հարցման մասնակիցներն անանուն լրացրել են ընդհանուր առմամբ 476 հարցաթերթիկ, որոնցից վերլուծության համար պիտանի են եղել 451-ը: Առաջին հարցաթերթիկում ընդգրկված 14 հարցերի միջոցով փորձ է արվել ուսումնասիրել ընտանեկան կյանքի վերաբերյալ սովորողների պատկերացումները: Հետազոտությունը ցույց տվեց, որ դպրոցահասակ մարդիկ կարևորում են ընտանիքը, սակայն չունեն բավարար գիտելիքներ այդ կառույցի և ընտանեկան բռնությունների վերաբերյալ:

«Ինչպե՞ս եք վերաբերվում ավանդական ընտանիքին» հարցին դրական են պատասխանել հարցվածների 77%-ը, 22%-ի համար դա կարևոր չէ, իսկ 1%-ը բացասական վերաբերմունք ունի: Արդյունքն արտացոլված է թիվ 1 տրամագրում:




**Տրամագիր 1. Հարցվածների վերաբերմունքն ավանդական ընտանիքի նկատմամբ**

Սովորողները կարևորում են ընտանիքը, բայց չեն հիմնավորում ընտանիքի դերն իրենց կյանքում, որովհետև ընտանիքի մասին բավարար գիտելիքներ չունեն:

Ամուսնալուծությանը բացասական է վերաբերվում հարցված սովորողների միայն 30%-ը, 62%-ը անորոշ պատկերացում ունի այդ երևույթի վերաբերյալ, դրական վերաբերմունք ունի 8%-ը: Այն, որ գերակշիռ մեծամասնությունը դժվարացել է հստակ պատասխան տալ, պայմանավորված է հարցվածների ոչ բավարար տեղեկացվածությամբ:

12 հարցերից կազմված երկրորդ հարցաթերթիկի միջոցով հետազոտվել են ընտանեկան բռնությունների վերաբերյալ սովորողների պատկերացումները: Ընտանեկան բռնություններին բացասաբար է վերաբերվում հարցվածների 84%-ը, հարցվածների 1%-ը դա ընդունում է որպես բնական երևույթ, իսկ 15%-ը դժվարացել է պատասխանել: Տվյալներն արտացոլված են թիվ 2 տրամագրում:




**Տրամագիր 2. Վերաբերմունքն ընտանեկան բռնությունների նկատմամբ**

Տվյալները ցույց են տալիս, որ սովորողները հստակ պատկերացում չունեն, թե ինչ է ընտանեկան բռնությունը:


Հարցման բազա հանդիսացած ուսումնական հաստատությունների մանկավարժների և Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի սկզբնական կրթության, պատմության և իրավագիտության ֆակուլտետների 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողների համար նախատեսված «Հարցաթերթիկ Գ»-ում ընդգրկված հարցերի միջոցով փորձ է արվել պարզել աճող սերնդի դաստիարակությամբ զբաղվող ներկա և ապագա մասնագետների տեսակետը

հանրակրթության ոլորտում ընտանեկան դաստիարակության իրականացման վերաբերյալ: Հարցվածների 56%-ը նշում է, որ ընտանեկան դաստիարակության ուղղությամբ առավել արդյունավետ աշխատանքն իրականացվում է ուսումնական, իսկ 44%-ը՝ արտաուսումնական գործընթացում: Ուսումնական տարբեր դասընթացներում էթնոմանկավարժական փորձը խտացնող ուսումնական նյութերի առկայության վերաբերյալ ստացվել են հետևյալ տվյալները. հարցվածների 18%-ը նշում է դրանց առկայությունը, 66%-ը համոզված է, որ նման նյութերը սակավ են, իսկ 16%-ը տվել է բացասական պատասխան: Տվյալներն արտացոլված են թիվ 3 տրամագրում:



**Տրամագիր 3. Հարցվածների տեսակետը դասընթացներում էթնոընտանեկան դաստիարակության վերաբերյալ նյութերի մասին**

«Անհրաժեշտ և հնարավոր համարո՞ւմ եք ընտանեկան դաստիարակության վերաբերյալ դասընթաց ուսումնասիրել ավագ դպրոցում» հարցին հարցվածների 87%-ը դրական պատասխան է տվել, 9%-ը հստակ դիրքորոշում չունի այդ հարցում, իսկ 4%-ը բացասական վերաբերմունք ունի հարցի նկատմամբ: Տվյալներն արտացոլված են թիվ 4 տրամագրում:



**Տրամագիր 4. Հարցվածների կարծիքը հանրակրթության ոլորտում ընտանեկան դաստիարակության վերաբերյալ դասընթացի ուսումնասիրման մասին**

Միաժամանակ, մանկավարժները և ուսանողները հիմնականում արտահայտում են այն տեսակետը, որ հանրակրթության բնագավառում անհրաժեշտ է սովորողներին զինել ընտանիքի վերաբերյալ իրավաբարոյական գիտելիքներով ու պատկերացումներով, քանի

որ նրանք իրենց գիտելիքների բացը չեն կարող լրացնել էթնորնտանեկան պետական վերահսկողությունից դուրս գտնվող տեղեկատվական անառողջ աղբյուրներից:

Հարցման արդյունքների հիման վրա արվել են հետևյալ եզրահանգումները.

1. Հարցված դպրոցականները բավականաչափ համակարգված գիտելիքներ չունեն «ընտանիք» կենսասոցիալական կառույցի մասին. նրանք պարզունակ կամ թերի պատկերացում ունեն ընտանեկան արժեքների մասին:
2. Հարցվածները հիմնականում չգիտեն, թե ինչ է ընտանեկան բնությունը, և ծանոթ չեն օրենսդրական փաստաթղթերին/դաշտին:
3. Դպրոցում ընտանեկան դաստիարակությանն ուղղված աշխատանքները հիմնականում իրավիճակային բնույթ ունեն: Հարցվածների 87%-ը նշում է, որ ընտանեկան դաստիարակության փորձը խտացնող էթնոմանկավարժական բովանդակությամբ ուսումնական նյութերն ընդհանուր առմամբ բավարար չեն ընտանեկան լիարժեք դաստիարակության իրականացման համար:
4. Դպրոցականները, ուսանողներն ու մանկավարժներ համակարծիք են այն հարցում, որ նպատակահարմար է հանրակրթության բովանդակության մեջ ներառել ընտանեկան դաստիարակության վերաբերյալ դասընթաց՝ հիմնված էթնոմշակութային առանձնահատկությունների վրա:

Չորրորդ՝ «**Ընտանեկան դաստիարակություն և արժեքանություն**» փորձնական դասընթացի ծրագիր» վերնագրով ենթագլխում ներկայացվել է մշակված «Ընտանեկան դաստիարակություն և արժեքանություն» փորձնական դասընթացի ծրագիրը՝ հիմնված էթնոմանկավարժության փորձի և գաղափարների վրա, որը նախատեսված է հանրակրթական ավագ դպրոցում ուսումնասիրման համար: Հիմնավորվել է, որ ընտանիքի ու ընտանեկան արժեհամակարգի մասին ազգային և համամարդկային էթնոմանկավարժական մշակույթի վերաբերյալ գիտելիքների ու պատկերացումների ձևավորումը կնպաստի սովորողների՝ ապագայում ընտանիք կազմելուն և նրա պահպանմանն ուղղված առողջ կենսասոցիալական վարքագիծ դրսևորելուն: Դասընթացը նախատեսված է հանրակրթական ավագ դպրոցի հենքային ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչում ուսումնասիրման համար: Ներկայացված են փորձնական դասընթացի նպատակը, խնդիրները, ակնկալվող վերջնարդյունքները, ուսումնական գործունեության տեսակները, դասընթացի կառուցվածքն ու թեմատիկ տրոհումը: Դասընթացը փորձաքննության է անցել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի Մ.Գորկու անվան թիվ 5 ավագ դպրոցի բարձր դասարաններում առանձին թեմաների ուսուցման տեսքով:

Տեսական և գործնական հետազոտության արդյունքում արվել են հետևյալ **եզրակացությունները.**

1. Մենամուսնական ընտանիքը՝ որպես քաղաքակրթության անկյունաքար, աճող սերնդի ոչ միայն ֆիզիկական պաշտպանության կառույց է, այլև առաջնային սոցիալականացման, էթնիկ ավանդույթների պահպանման և սերնդեսերունդ փոխանցման, ազգային

հոգեկերտվածք ունեցող երեխաների դաստիարակության միջավայր՝ իր էթնոմշակութային առանձնահատկություններով:

2. Որպես էթնոմանկավարժական մշակույթի բաղադրիչ՝ ընտանեկան դաստիարակության նպատակն է ավանդաբար փոխանցել չափանիշային ընտանիքի՝ դաստիարակչական արժեք ունեցող նկարագիրը, ապահովել հասարակության հոգևոր և նյութական արժեքներն աճող սերնդին ավանդման գործընթացի իրականացումը՝ զարգացողական կապ ձևավորելով անհատի, ընտանիքի ու հասարակության միջև: Առանց այս իրողությունը հաշվի առնելու անհնար է գիտականորեն կառուցել մանկավարժական բնույթի ցանկացած գործունեություն:

3. Հայ էթնոմանկավարժական մշակույթի զարգացման պատմահամեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ընտանեկան դաստիարակության կենսահաստատ միջոցների կիրառման շնորհիվ է ընտանիքը պահպանվել էթնոսի զարգացման ծայրահեղ վտանգավոր իրավիճակներում, նույնիսկ պետականության բացակայության դեպքում, և այսօր նպատակահարմար է դաստիարակչական այդ միջոցներով հարստացնել հանրակրթության բովանդակությունը:

4. Փոխակերպվող հասարակության զարգացման արդի պայմաններում հազարամյակների փորձով ստուգված և հայ էթնոմանկավարժական մշակույթում խտացած ընտանեկան դաստիարակության փորձի, գաղափարների նորովի իմաստավորումն ու համակարգված փոխանցումը նպաստում են կենսասոցիալական արժեհամակարգի ժառանգմանն ու աճող սերնդի ճիշտ դաստիարակությանը՝ որպես անձի, պետության և հասարակության ինքնապաշտպանական հզոր համակարգ: Այս տեսանկյունից մանկավարժական գիտությունը ձեռք է բերում ոչ միայն սոցիալ-մշակութային, այլև ռազմավարական նշանակություն:

5. Հայ էթնոմանկավարժական մշակույթում ընտանեկան դաստիարակության վերաբերյալ մանկավարժական գաղափարները մեկնաբանվել են հայ մշակույթի նշանավոր գործիչների հայացքներում: Մասնավորապես ուշագրավ են նախնիների կենսասոցիալական արժեհամակարգի ժառանգմանն ու փոխանցման կարևորումը (Մ. Խորենացի), էթնոկրի դաստիարակության կենսափիլիսոփայությունն ազգայինից համամարդկայինը տանելը (Գր. Նարեկացի), ընտանեկան դաստիարակության՝ էթնիկ մշակույթով պայմանավորվածության, ընտանեկան դաստիարակության մշակույթի և պետական կրթահամակարգի կապի կարևորումը (Խ. Աբովյան), հայ կնոջ էթնոմշակութապահպան դերի, կանանց նկարագրերի ազգագրական համեմատական վերլուծությունները (Րաֆֆի), մարդու ձևավորման վրա ազդող էթնոմանկավարժական գործոնների, էթնոսոցիալական կրթական միջավայրի, օրորոցային և ծիսական երգերի էթնոնույնականացման գործառույթի, էթնոտրաժշտական դաստիարակության միջոցների վերաբերյալ մեկնաբանությունները (Կոմիտաս վարդապետ):

6. Ընտանեկան դաստիարակության առաջնային գործոններ են կենսատարածքը՝ իր բնապատմական, աշխարհաքաղաքական բնութագրերով, լեզուն և լեզվական մշակույթի արտահայտությունները, սոցիալ-տնտեսական պայմանները, կրոնը՝ իր էթնոգիդակտիկա-



կան առանձնահատկություններով, արդի տեղեկատվական տեխնոլոգիաները, ինչպես նաև ժողովրդագրական տեղաշարժերը՝ պայմանավորված համաշխարհայնացման գործընթացներով:

7. Հայ էթնոմանկավարժական մշակույթում ընտանեկան դաստիարակության միջոցներ են բանահյուսության ժանրերը, ազգային երգն ու պարը, ավանդույթներն ու ծիսական արարողությունները, էթնոկիրառական արվեստը, ինչպես նաև տեղանվանաբանությունն ու անվանաբանությունը՝ հասարակական արժեքներում ունեցող բովանդակությամբ.

- բանահյուսության մեջ արտացոլված են ընտանեկան արժեքների ու դաստիարակության փորձի միջոցով աճող սերնդի հումանիստական և անձնակենտրոն դաստիարակության առաջնահերթությունները՝ որպես էթնոհանրության պահպանման և զարգացման ուղենիշ. այդ կենսունակ փորձի ու արժեքների նպատակային կիրառումն արդիական է բոլոր ժամանակներում,

- էթնոհանրությունն ավանդույթների և ծիսական արարողությունների միջոցով աճող սերնդին է փոխանցում սոցիոնորմատիվ մշակույթը, և այդպիսով ապահովվում է մշակութային ժառանգորդությունը,

- օրորոցային և հարսանեկան երգերը ընտանեկան և հասարակական արժեհամակարգերից բխող գործունեության ծրագիր են, ազգային պարերը գեղագիտական, ֆիզիկական, սեռական դաստիարակության, ինքնաճանաչման և էթնոգիտակցության ձևավորման միջոց են և չեն կորցնում իրենց կիրառական նշանակությունը,

- էթնոկիրառական արվեստում առարկայացած ընտանեկան կենսամիջավայրի բաղադրիչները՝ որպես առաջնային տպավորման, ընդօրինակման, ժամանցի և ուսուցման միջոցներ, իրենց էթնոսոցիալական բնույթով պայմանավորում են մարդու ձևավորման գործընթացն ու հետագա գործունեությունը, ուստի դրանց ուսումնասիրումը կարևոր է դաստիարակության գործընթացի արդյունավետ իրականացման համար:

8. Ներկայումս պետական նշանակություն են ստանում էթնոմանկավարժական գաղափարների համատեքստում ընտանեկան դաստիարակության գիտական ուսումնասիրման հարցը ժամանակակից պահանջներին բավարարող մեթոդաբանությամբ, և ըստ այդմ ընտանեկան դաստիարակության վերաբերյալ հանրակրթական ծրագրի մշակումն ու իրականացումը: Կատարված սոցիոլոգիական հարցումների վերլուծությունը ևս ցույց է տալիս, որ հանրակրթության բովանդակության մեջ նպատակահարմար է ընդգրկել ընտանեկան դաստիարակության վերաբերյալ դասընթաց՝ հիմնված էթնոմշակութային առանձնահատկությունների վրա:

9. Մշակված «Ընտանեկան դաստիարակություն և արժեքանություն» փորձնական դասընթացի ծրագիրը նպատակաուղղված է ազգային և համամարդկային ընտանեկան արժեքների, էթնոմանկավարժության մեջ խտացած դաստիարակության փորձի մասին սովորողներին գիտելիքներ հաղորդելու միջոցով ընտանեկան դաստիարակության գործընթացի առավել արդյունավետ իրականացմանը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Մանուկյան Ա. Լ., Դաստիարակչական և ուսուցաբանական գաղափարների արտացոլումը ազգային էպոսում, Մանկավարժական միտք, 2018 (1-2), 5 էջ:
2. Մանուկյան Ա. Լ., Ընտանեկան դաստիարակության գաղափարների արտացոլումը հոգևոր գրականության մեջ, Հայագիտական հանդես, 2018 (1), 7 էջ:
3. Մանուկյան Ա. Լ., «Ընտանեկան արժեքանություն» փորձնական դասընթացի ծրագիր, Հայագիտական հանդես, 2018 (3), 8 էջ:
4. Մանուկյան Ա. Լ., Ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները փոխակերպվող հասարակության մեջ, Գիտական տեղեկագիր, 1-2 (34-35), -Եր.: Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ, 2018, 5 էջ:
5. Մանուկյան Ա. Լ., Ընտանեկան արժեհամակարգային հարցերը «Սասունցի Դավիթ» էպոսում», Մանկավարժական միտք, 2018 (4), 5 էջ:
6. Մանուկյան Ա. Լ., Ընտանեկան դաստիարակության հիմնահարցը հայ էթնոմանկավարժության մեջ, Հայագիտական հանդես, 2018 (4), 9 էջ:
7. Մանուկյան Ա. Լ., Էթնոմանկավարժական գաղափարների արտացոլումը Կոմիտաս վարդապետի մշակութային ժառանգության մեջ, Պատմաբանասիրական հանդես, 2019 (1), 7 էջ:
8. Մանուկյան Ա. Լ., Ընտանեկան դաստիարակության գաղափարների արտացոլումը Ղ. Աղայանի մանկավարժական ժառանգության մեջ, «Հայ մանկավարժության երախտավորները ժամանակակից մանկավարժական մոտեցումների համաբնագրում» Հանրապետական գիտաժողովի զեկուցումների և գիտական հոդվածների ժողովածու, - Եր.: Արտագերս 2018, 4 էջ:
9. Մանուկյան Ա. Լ., Գրիգոր Նարեկացու էթնոդաստիարակչական գաղափարները, «Դեֆակտո պետությունները հետխորհրդային տարածաշրջանում. Զարգացման ուղղությունները և հեռանկարները» ԿԳՄՆ; Մեսրոպ Մաշտոց համալսարան, - Ստեփանակերտ.: «Դիզակ պլուս» հրատ., 2018. 4 էջ:

МАНУКЯН АШОТ ЛЕКДАРОВИЧ  
ОСНОВНАЯ ПРОБЛЕМА СЕМЕЙНОГО ВОСПИТАНИЯ В АРМЯНСКОЙ  
ЭТНОПЕДАГОГИЧЕСКОЙ КУЛЬТУРЕ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01- “Теория и история педагогики”.

Защита диссертации состоится 27-ого февраля 2020г. в 12:00 на заседании специализированного совета 020 “Педагогика” ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х.Абовяна, по адресу: 0010, г. Ереван, ул. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

**Актуальность исследования**

Актуальность данного исследования обусловлена особенностями жизнедеятельности армянского этнического сообщества, процессами глобализации экономики, преобразованиями общества, людскими передвижениями и межкультурным диалогом, необходимостью осмысления гуманистических семейных ценностей, накопленного жизнеспособного опыта семейного воспитания, употреблённых средств в армянской антипедагогической культуре с точки зрения современности, и их применения в современной педагогической практике. Семья, являющаяся основой армянского общества, государства и цивилизации, сегодня подвергается разнообразным культурным воздействиям.

В этом контексте на первый план выходит первостепенность разностороннего воспитания личности, определение роли семьи в этом сложном процессе, психопедагогического анализа опыта семейного воспитания в рамках армянской этнопедагогической культуры; изучение, систематизация и решение задачи возможности его широкого внедрения в образовательную систему, что имеет в конечном итоге, целью способствовать обеспечению национальной и государственной безопасности Республики Армения.

**Цель исследования** - выявление в армянской этнопедагогической культуре средств семейного воспитания, теоретическое и практическое обоснование целесообразности их применения в педагогическом процессе.

**Задачи исследования**

1. Изучить вопрос формирования и развития семьи в различные исторические периоды, проанализировать философские, социологические, культурологические, аксиологические, этнографические, педагогические, психологические концептуальные подходы относительно семейного воспитания в этнопедагогической культуре.
2. Представить в рамках этнопедагогики взгляды представителей армянской и зарубежной педагогической мысли по семейному воспитанию.
3. Проанализировать идеи семейного воспитания, отражённые в различных жанрах армянского фольклора (эпос, исторические сказания, легенда, сказка, басня, притча, пословица, благословение, наставление, клятва) в духовной литературе, национальной песне-пляске, ритуальных церемониях и этноприкладном искусстве.
4. Охарактеризовать особенности семейного воспитания в современном изменяющемся обществе, проанализировать роль и значение воспитательного опыта, отраженного в армянской этнопедагогической культуре, в деле предотвращения семейного насилия.
5. Провести социологические опросы в учебных заведениях, с целью выявления представлений и знаний учащихся, студентов и педагогов по вопросам семейного воспитания, семейных ценностей и семейного насилия.
6. Разработать экспериментальную учебную программу «Семейное воспитание и аксиология», основанную на национальном и общечеловеческом этнопедагогическом культурном наследии, и обосновать необходимость её внедрения в общеобразовательную сферу.

### **Научная новизна исследования**

1. Исходя из сравнительного анализа опыта семейного воспитания и идей армянской и мировой этнопедагогической культуры, были по-новому представлены и прокомментированы вопросы семейного воспитания, выделены приоритеты осуществления этого процесса в современном изменяющемся обществе.
2. Выявлены и охарактеризованы взгляды известных педагогов-мыслителей разных исторических эпох относительно применения опыта и идей этнопедагогики, формирования этносознания у подрастающего поколения в процессе семейного воспитания.
3. В контексте армянской этнопедагогической культуры системным образом представлены средства семейного воспитания – фольклорные жанры, национальные песни-пляски, традиции и ритуалы, этноприкладное искусство, ономастика и топонимика, обоснована необходимость их осмысления и целесообразность применения в процессе воспитания с точки зрения актуальности.
4. В результате теоретических исследований и анализа данных соцопросов обоснован вопрос научного исследования опыта и идей семейного воспитания в контексте армянской этнопедагогической культуры, разработана экспериментальная учебная программа «Семейное воспитание и аксиология», предназначенная для старшей школы общего профиля базового учебного плана.

### **Теоретическая значимость исследования**

1. Проанализированы и теоретически обоснованы виды биосоциального института «семьи», её функции, государственно-юридические гарантии, морально-правовые регуляторы развития и формирования семьи в контексте этнопедагогики.
2. Систематизированы взгляды и идеи в сфере этнопедагогики, выраженные со стороны армянских и мировых выдающихся педагогов и мыслителей, относительно вопросам семейного воспитания.
3. Теоретически обоснован потенциал семейного воспитания этнопедагогических факторов и средств (жизненное пространство, природа, труд, язык, религия, фольклор, прикладное искусство, социально-экономическая система и др.).
4. Раскрыта и теоретически обоснована жизнестойкость этнопедагогических средств в процессе решения актуальных проблем семейного воспитания, самосохранения личности, предотвращении семейного насилия, биосоциальных задач этносоциума, государства и мирового общества.

### **Практическая значимость исследования**

1. Теоретические и практические результаты исследования могут быть полезными для специалистов занимающихся различными вопросами семейного воспитания: педагогов, психологов, социологов, культурологов, этнографов, историков, юристов.
2. Разработанные материалы могут быть практически применены в процессах переподготовки учителей, в тематическом планировании занятий классных руководителей, в содержании образования (предметные критерии, программы, учебники, учебные пособия) в процессе разработки компонента семейного воспитания.

### **Структура диссертации**

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка литературы из 151 источников, включает 4 таблиц, 15 диаграмм и 4 приложений. По теме диссертации опубликовано 9 статей. Объем работы составляет 177 компьютерных страниц.

MANUKYAN ASHOT LEKDAR  
THE BASIC ISSUE OF FAMILY UPBRINGING IN THE ARMENIAN ETHNO-PEDAGOGICAL  
CULTURE

Thesis for degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.01 “Theory and history of Pedagogy”.

The defence will be held at SCC’s (Supreme Certifying Committee’s) 020 Degree-awarding Scientific Council’s session at Khachatur Abovian Armenian State Pedagogical University on February 27, at 12:00.

Address: Tigran Mets 17 avenue, 0010 Yerevan.

### **Summary**

#### **The relevance of the research:**

The family that forms the basis of Armenian society, state, and civilization today is subject to various cultural influences. The relevance of this study is based on several key factors: the vital features of the Armenian ethnic community, the process of economic globalisation, societal transformation, the movement of humans and inter-cultural dialogue, the accumulated practical experience of family raising in current conditions within the Armenian ethno-pedagogical culture, appreciation for the employed methods of family raising, the need to understand humanistic family values from a current perspective and the need to apply these in current pedagogical practice.

In this context, importance is placed today on comprehensively studying the individual’s education process, discovering the role played by family in this process, the psycho-pedagogical analysis of the Armenian ethno-pedagogical culture’s experience of family raising, the study, classification and solution to the possibility of widely implementing this in the educational system, which ultimately stems from the need to contribute to the national and state security of the Republic of Armenia.

#### **The aim of the research:**

The study is to identify the methods of family raising in Armenian ethno-pedagogical culture and to substantiate theoretically and practically the feasibility of their application in the pedagogical process.

#### **The objectives of the research are:**

1. To study the development and formation of the family as a bio-social structure in different historical and cultural periods, to analyze in ethno-pedagogical culture the philosophical, sociological, cultural, axiological, ethnographic, pedagogical, psychological and conceptual approaches to family raising.
2. In the context of ethno-pedagogy, to characterize the views of prominent representatives of Armenian and international pedagogical thought on family raising.
3. To analyze the ideas of family raising reflected in different types of Armenian folklore (epics, traditional stories, myths, fairy tales, parables, proverbs, blessings, advice, oaths), spiritual literature, national song and dance, ritual ceremonies, and ethnic arts and crafts.
4. To describe the peculiarities of family raising in a modern, transforming society. To analyze the role and significance of family raising experience expressed in the Armenian ethno-pedagogical culture in preventing domestic violence.
5. To conduct sociological surveys in educational institutions to study perceptions and knowledge of pupils, students and teachers about family raising, family values and domestic violence.

6. To develop a pilot program for a school course called “Family Raising and Axiology” based on the national and universal ethno-pedagogical cultural heritage. To substantiate the need for implementing such a program in the general educational system.

**The scientific novelty of the research:**

On the basis of Armenian and various international ethno-pedagogical cultures’ experience of family raising and based on a comparative analysis of their ideas, this research interprets the issue of family raising in a new way, commenting on and highlighting the priorities of implementing this process in a modern and transforming society.

1. The study reveals and characterises the views, experience and ideas of prominent thinkers and teachers of different historical eras on applying the process of ethno-pedagogy to family raising, and on the younger generation’s formation of ethnic consciousness.
2. Within the context of the Armenian ethno-pedagogical culture, the means of family raising - types of folklore, national song and dance, traditions and rituals, ethnic arts & crafts, onomastics and toponymy - have been systematically presented from the perspective of modern day significance and their ability to be applied to the family raising process.
3. As a result of the theoretical research and the analysis of survey data, the study has substantiated the need for the scientific study of the experience and ideas of family raising in the context of ethno-pedagogical culture, and a pilot program for a high school course called “Family Raising and Axiology” has been developed, which is designed to be part of the general curriculum of upper secondary schools.

**The theoretical significance of the research:**

1. The study analyses and theoretically substantiates the family as a bio-social institution, including its different types, its functions, its associated state & legal guarantees and the moral and legal determinants of family development and formation in the context of ethno-pedagogy.
2. The study systematically classifies the views and ideas in ethno-pedagogy expressed about family raising by prominent Armenian and international thinkers.
3. The study theoretically substantiates the potential of ethno-pedagogical factors and means (living space, nature, work, language, religion, folklore, applied arts, socio-economic system, etc.) for raising the family.
4. The study discovers and theoretically substantiates the viability of ethno-pedagogical tools for family raising, self-defence, the prevention of domestic violence, and for contributing to solving current problems of the ethnic community, the state and global society.

**The practical significance of the research:**

1. The theoretical and practical results of this research can be useful for different specialists in the field of family and family raising: pedagogues, psychologists, sociologists, cultural scientists, ethnographers, historians, lawyers.
2. The developed materials can be used in practice in teacher training, in planning topics for tutorials, and in educational content (subject criteria, programs, textbooks, manuals) in the development of the family raising component to the curriculum.

**The structure of the thesis:**

The thesis consists of an introduction, three chapters, conclusions, a bibliography with 151 references; the thesis includes 4 tables, 15 charts and 4 appendices. 9 articles were published on the topic of the dissertation. The volume of work is 177 computer pages.

